ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7/14

17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 10 անդամներ:

Բացակա էին՝ Սոնա Ադամյանը, Անահիտ Անդրեասյանը, Արտուր Բաղդասարյանը, Արթուր Գրիգորյանը, Մարուսյա Հովհաննիսյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Խաչատուր Անդրեասյանը:

Նիստը արձանագրում էր Աննա Նավասարդյանը:

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի 2024 թվականի հոկտեմբերի 17-ի հերթական նիստի օրակարգը՝

1)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2024 թվականի բյուջեի ինը ամսվա եկամուտների և ծախսերի կատարման ընթացքի մասին.
2)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն համարվող գույքի 2024 թվականի գույքագրման փաստաթղթերում լրացումներ կատարելու մասին.
3)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անհատույց օգտագործման հանձնելու մասին.

4)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ քաղաքում 864 աշակերտի համար նախատեսվող կրթահամալիրի կառուցման համար նախնական համաձայնություն տալու մասին.
5)Գույքի նվիրատվությանը համաձայնություն տալու մասին.
6)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում 2023 թվականին իրականացված բնապահպանական ծրագրի հաշվետվությունը հաստատելու մասին.
7)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 92-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԻՆԸ ԱՄՍՎԱ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2024 թվականի բյուջեի ինը ամսվա եկամուտների և ծախսերի կատարման ընթացքի մասին համայնքի ղեկավարի կողմից տրված հաղորդումը՝ համաձայն բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության 1-5 հավելվածների:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է /Որոշում N 93 -Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

Որոշման նախագծի քննարկումից հետո, քվեարկության (կողմ-5, դեմ-1, ձեռնպահ-4) արդյունքներով համայնքի ավագանին որոշում չի ընդունել:

Կողմ-5 Դեմ-1 Ձեռնպահ-4

Որոշումը չի ընդունվել

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անհատույց օգտագործման իրավունքով հանձնել «Մեղրի համայնքի մանկապապարտեզ» ՀՈԱԿ-ի Վարդանիձորի մասնաճյուղին՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 94-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿ ՔԱՂԱՔՈՒՄ 864 ԱՇԱԿԵՐՏԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Տալ նախնական համաձայնություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ քաղաքում 864 աշակերտի համար նախատեսվող կրթահամալիրի կառուցման նախագծի նախնական տարբերակին:

2.Համայնքի ղեկավարին ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացմանը:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 95-Ա/

ԼՍԵՑ - ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին ամրացված՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի գազամատակարարման համակարգի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 12092024-09-0016 վկայական), Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի

Լեհվազ գյուղի գազամատակարարման համակարգի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 12092024-09-0001 վկայական), Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի գազամատակարարման համակարգի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 12092024-09-0005 վկայական), սույն որոշման NN 1, 2, 3 և 4 հավելվածներում նշված գույքի և որպես Հայաստանի Հանրապետության սեփականություն գրանցված՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Գուդեմնիս գյուղի գազամատակարարման համակարգի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 12092024-09-0004 վկայական, այսուհետ՝ գույք) նվիրատվությանը՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքին:

2.Համայնքի ղեկավարին ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացմանը:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 96-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում 2023 թվականին իրականացված բնապահպանական ծրագրի հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է /Որոշում N 97-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի նոյեմբերի 15-ը՝ ժամը 17:00-ն:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 98-Ա/

Ավագանու անդամներ

ԱՆԱՀԻՏ ԱՂԱՄԱԼՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԲԱԳՐԱՏ ՉԱՔԱՐՅԱՆ

ԱՐԱՐԱՏ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԱՐՏՈՒՇ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՇԱՀԵՆ ՄԻՆԱՍՅԱՆ

ՄԱՐՅԱՄ ՄԻՔԱԵԼՅԱՆ

ՆԱՐԵԿ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ԱՐԵՎԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Ա. Նավասարդյանը